

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺՆԻ
ՓՈՐՁԱԳԵՏ ԱԼԵՔՍԵՅ ՍԱՍՈՒՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 9-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ը ԸՆԿԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Ալեքսեյ Սասունի Ավետիսյանս, որպես ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) գրանցման և հաշվառման բաժնի փորձագետ՝ 2025 թվականի հունվարի 9-ից մինչև 2025 թվականի հուլիսի 9-ը ներառյալ կատարել եմ հետևյալ աշխատանքները, մասնավորապես՝

ա. Մասնակցել եմ Գործակալությունում իրավաբանական անձանց կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի հետ առնչվող կայացված թվով 6 վարչական նախագծերի կազմման աշխատանքների իրականացմանը,

բ. Իրականացրել եմ իրավաբանական անձանց կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի ներկայացմանն առնչվող անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում,

գ. Մասնակցել եմ քաղաքացիներին հասցեագրվող պատասխան գրությունների նախագծերի կազմման աշխատանքներին,

դ. Մասնակցել եմ իրական շահառուների հայտարարգրման էլեկտրոնային համակարգի արդիականացման հետ կապված տեխնիկական խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներին՝ խնդրի ի հայտ գալու դեպքում կապի մեջ լինելով «Վի Իքս Սոֆթ» ընկերության մասնագետների հետ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԱԼԵՔՍԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ